

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԳԻՐԲ № 30

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ՅԵՐԵՎԱՆ

1929

ԳԻՐԲ № 30

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՐԵՎԱՆ

1920

A II
38324
16836

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 3600
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2156 ք.
ՏԻՐԱԺ 4000

ՔԱՂՎԱԾՔ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻՆ ԱՌԸՆԹԵՐ 1928 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 5 ԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ՝ ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՁՆԵՐԻ, ԳԱՎՀՐԱՀԱՆԳԻՁՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1928 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

12. Արձանագրել, ՎՈՐ սեկցիաների աշխատանքները հանրապետական մասշտաբով թույլ են ընթացել, իսկ ՎՈՐՈՇ ՎՋԱՐԵՐՈՒՄ սեկցիաները մատնված են յեղել անգործունեության: Սեկցիաների գործունեությունն, ուժեղացնելու և աշխուժացնելու նպատակով անհրաժեշտ է կիրարկել հետևյալ միջոցները.

ա) սեկցիաների աշխատանքներին մասնակից անել ՎՈՇ միայն գյուղխորհուրդների անդամներին, այլ նաև գյուղական ակտիվը.

բ) դաժառակային գործկոմների և խորհուրդների սեկցիաների մեջ այս կամ այն անդամներին մտցնելու, հաշվի առնել նրանց կողմից տվյալ աշխատանքը կատարելու ընդունակությունն ու հնարավորությունը և կողմնակի աշխատանքներով ծանրարեւնվածներին չմրացնել սեկցիաների մեջ.

գ) գործկոմներում և խորհուրդներում քննվելիք կարևոր հարցերը նախորոշ մշակման յենթարկել սեկցիաներում. խուսափել սեկցիաներին զուգընթաց ժամանակավոր հանձնաժողովներ կազմակերպելուց.

դ) կազմակերպել սեկցիաների նախագահներին և ակտիվ անդամներին խորհրդակցություններ, ՎՈՐԱՆԿ ԲԱԳԱՐԵԼ նրանց հերթական անելիքները.

ե) ազդարարություն անել այն գյուղխորհուրդներին, նախագահներին, ՎՈՐՈՇՔ իրենց սխալ գործելակերպով

խոչընդոտ են հանդիսանում սեկցիաների ինքնագործու-
նեությանն ու նախաձեռնությանը.

դ) ուշադրություն դարձնել գյուղխորհուրդների և
սեկցիաների փոխհարարեության վրա, միջոցներ ձեռք
առնելով, վոր այդ ասպարիզում գյուղխորհուրդների
դեկավարությունը դրված լինի առողջ և նորմալ հունի
մեջ:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶԱՏԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ֆեբևան.

ԳՅՈՒՂ ԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Այն դրութիւնը, վոր գյուղում մեն մենակ գյուղական խորհուրդի նախագահն եւ ամեն ինչ անում, իսկ մյուս անդամները, աշխատավոր գյուղացիները հեռու յեն մնում թե՛ պետական եւ թե՛ հասարակական աշխատանքներից, յերկար գոյութիւն ունենալ չեր կարող: Բնական եւ՝ ինչպես ԽՍՀ Միութեան մյուս հանրապետութիւններում, այնպես եւ Խորհրդային Հայաստանում այս հանգամանքը պետք եւ դառնար մեր ղեկավար մարմինների ուղադրութեան առարկա եւ քննութեան նյութ, մանավանդ վոր աշխատանքների մասսայականացման եւ աշխատավոր գյուղացիութեան, գյուղի ակտիվ տարրերին Խորհրդային իշխանութեան մեջ քաշելու հարցը ներկայումս խոշոր գործնական նշանակութիւն ունի մեզ համար:

Սեկցիաների կազմակերպման անհրաժեշտութիւնը հետեւանք եւ մեր հանրապետութեան տնտեսական, կուլտուրական եւ քաղաքական կյանքի զարգացման եւ դրանց զուգընթաց աճող աշխատավոր մասսաների ակտիվութեան: Սեկցիաներն իրենց գործունեութեամբ գյուղում կոչված են զարկ տալու աշխատավոր գյուղացիութեան մասսայական ինքնազործունեութեանը, նոր ու կատարելագործված միջոցներով՝ գյուղի հասարակական բարեկարգութիւնը բարձրացնելու: Սեկցիան լավագույն միջոցն եւ չքավոր եւ միջակ գյուղացուն, բատրակին, բանվորին, ծառայողին, գյուղական աշխատավոր ինտելիգենցիային մասնակից անելու գյուղական խորհուրդի առօրյա գործնական աշխատանքներին, ուրեմն եւ լավագույն ճանապարհը՝ գյուղի իշխանութեան առաջ դրված բոլոր հիմնական ու կարեւոր հարցերին կոյրելու յուժնով տալու:

**ԻՆՉՊԻՍԻ ՍԵԿՑԻԱՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Համաձայն գյուղական խորհուրդների 1928 թ. հունիսի 17-ի կանոնադրության և հետագայում կատարված լրացումներին՝ գյուղական խորհուրդներին առնթեր պարտադիր կերպով կազմվում են հետևյալ սեկցիաները. գյուղատնտեսական, շինարարական—սանիտարական, կուլտուր—կրթական, հասարակական կազմակերպություններին ոգնող, դատական, կենցաղային և բանվորա—գյուղացիական տեսչության (վերջին յերկուսը առայժմ խոշոր գյուղխորհուրդներին կից) սեկցիաներ: Բացի այս սեկցիաներից՝ գյուղական խորհուրդը կարող է ստեղծել և այլ սեկցիաներ, յեթե այդ պահանջն աշխատանքի պայմանները: Ասենք, վաղը Կարճևանի գյուղական խորհուրդն իր աշխատանքների ընթացքում կարիք զգաց կազմակերպելու աշխպաշտպանության սեկցիա: Նա իրավունք ունի այդպիսին կազմակերպելու, յեթե գոյություն ունեն պայմաններ, վոր թույլ չեն տալիս այդ աշխատանքները դնել գյուղատնտեսական սեկցիայի վրա:

Նոր սեկցիաներ կազմակերպելիս գյուղական խորհուրդը հաշվի պիտի առնի հետևյալ հանգամանքները. արդյո՞ք անելիք ունի այդ սեկցիան, զգացվո՞ւմ է նրա անհրաժեշտությունը գյուղում, թե, այդպիսին կազմակերպելով, միայն զուգահեռություն, խառնաշփոթություն պիտի առաջանա գոյություն ունեցող և նոր կազմակերպվելիք սեկցիաների մեջ, վորից կարող են տուժել ընդհանուր աշխատանքները:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ**

Գյուղական խորհրդի անդամները և փոխանդամները պարտավոր են անդամագրվել սեկցիային

Սեկցիաները կազմակերպելիս՝ առաջին հերթին ներան մասնակից պիտի լինեն գյուղական խորհուրդի անդամները և փոխանդամները: Նրանցից յուրաքանչյուրը պարտավոր է առնվազն մեկ սեկցիայի անդամ լինել իր ընտրությամբ: Յեթե գյուղխորհրդի անդամներից

վորեւ մեկը ազատ ժամանակ ունի կամ, նվիրված լինելով հասարակական աշխատանքներին, ցանկանում եմ ժափամանակ աշխատել և՛ դյուղատնտեսական և՛ կուլտուր-կրթական սեկցիաններում, ի հարկե, նրան վոչ վոք արգելել չի կարող, և դյուղական խորհուրդն այդ ցանկությանը պիտի ուրախությամբ ընդառաջ գնա:

Սեկցիաները կազմակերպվում են դյուղական խորհրդի առաջին կազմակերպչական նիստում: Յեթե այդ հնարավոր չէ, սեկցիանների կազմակերպումը կատարվում է դյուղական խորհրդի յերկրորդ պլենար նիստում: Մինչ պլենար նիստի հրավիրումը՝ դյուղական խորհուրդի ապագա առը նախորոք պիտի հարցնի յուրաքանչյուրի ցանկությունն այս կամ այն սեկցիայում աշխատելու մասին. այդ ցանկությունների հիման վրա կազմի նախնական ցուցակ և առաջադրի դյուղական խորհուրդի պլենար նիստի քննությանը: Սեկցիանները կազմակերպելիս դյուղական խորհուրդը իրավասու յե ըստ իր հայեցողության անդամների վերադասավորում կատարել: Յեթե մեկը ցանկանում է կուլտ-կրթական սեկցիայում աշխատել, մինչդեռ նա, լինելով արհեստավոր ավելի ոգտակար կարող եր լինել շինարարական-սանիտարական աշխատանքների ասպարիզում, դյուղական խորհուրդն իրավունք ունի առաջադրել նրան մասնակցելու այդ սեկցիայում և դյուղխորհուրդի անդամը պարտավոր է յենթարկվել դյուղխորհուրդի վորոշման:

Գյուղխորհրդի սեկցիաների մեջ գրավվում են նաև

գյուղխորհրդի վոչ անդամները

Ինչպես նախատեսնված է դյուղական խորհուրդի կանոնադրությամբ, սեկցիանների մեջ, բացի դյուղական խորհուրդի անդամներից ու փոխ-անդամներից, հոծարակամ մասնակցության կարգով գրավվում են աշխատավոր դյուղացիներ, գեղջկուհիներ, բատրակներ, վորոնք իրենց ցույց են տվել հասարակական խորհրդային աշխատանքների մեջ, նաև Կոմունիստական Կուսակցության, Լենինյան Կոմունիստական Յերիտասարդության բջիջների, արհեստակցական միությունների և այլ հասարակական, տնտեսական կազմակերպությունների անդամները, կամ ներկայացուցիչները: Յեթե

դրսից վորեւ մեկին գյուղական խորհուրդը առաջադրում է մասնակից լինել այս կամ այն սեկցիայի աշխատանքներին, իսկ նա, ծանրարեւոյմած լինելով, այդ հնարավորությունն չունի, գյուղական խորհուրդն իրավունք չունի պարտադրել նրան այդ աշխատանքը տանելու: Ինչպես ասվեց սկզբում, գյուղխորհուրդը պարտադրել կարող է միայն գյուղխորհրդի անդամներին և փոխանդամներին:

Իրեւ ընդհանուր կանոն, դրսից գյուղխորհուրդի մեջ պայմանավորված անդամների թիվը ավելի չպիտի լինի սեկցիայում մասնակցող գյուղխորհուրդի անդամների թիվից, սակայն անհրաժեշտության դեպքում թույլատրելի չի այդ ընդհանուր կանոնից շեղվելը, այն պայմանով, վոր սեկցիայում աշխատող գյուղխորհուրդի անդամների ղեկավարությունը ապահովված լինի:

Սեկցիաների նախագահներին ընտրում է գյուղական
խորհուրդը.

Վորպես ընդհանուր կանոն յուրաքանչյուր սեկցիա գործում է գյուղխորհուրդի մի անդամի ղեկավարությամբ, վոր նրա նախագահն է հանդիսանում: Գյուղխորհուրդի սեկցիաների նախագահներին ընտրում է գյուղական խորհուրդը հենց այն ժամանակ, յերբ նա կազմակերպում է սեկցիաներին: Առանձին դեպքերում գյուղական խորհուրդի կանոնադրությունը թույլ է տալիս սեկցիաների նախագահներ ընտրել սեկցիաների այլ անդամներից, վորոնք թեև գյուղխորհուրդի անդամ չեն, սակայն իրենց փորձառությամբ, իրենց պատրաստականությամբ կարող են հաջողությամբ տանել սեկցիայի ղեկավարման աշխատանքները:

Սեկցիայի քարտուղարի ընտրության կարգը և նրա
անելիքները

Ինչպես ասված է գյուղխորհուրդների սեկցիաների մասին հրահանգի մեջ, սեկցիան իր աշխատանքներին համար հատուկ ապադարատ չունի և նա ոգայվում է գյուղխորհուրդի ապադարատից: Այս հանգամանքը չիրացատում սեկցիայի առանձին քարտուղար ունենալու իրավունքը: Ընդհանրապես, կյանքում քարտուղարի

անհրաժեշտութիւնը միշտ զգացվել է և կանոնավոր աշխատել և այն սեկցիան, վոր ունեցել և քարտուղար:

Սեկցիան իր նիստերի արձանագրութիւնները կազմելու, սեկցիայի անդամներին հաշվառման յենթարկելու և ընդհանրապես այլ գրասենյակային տեխնիկական աշխատանքների համար ընտրում և իր միջից մի քարտուղար, վորը պետք է լինի գրագետ, աշխատանքներին ծանոթ անձնավորութիւն: Այն սեկցիաներ, վորոնք իրենց աշխատանքները պցում են առանց այն ել ծանրաբեռնված գյուղխորհուրդի քարտուղարների վրա, պետք է համոզված լինեն, վոր աշխատանքները դատապարտվելու յեն յանհաջողութեան:

Գյուղխորհրդի յուրաքանչյուր սեկցիայի քարտուղարը պարտավոր է, առանց ուշացնելու, կազմել սեկցիայի նիստերի արձանագրութիւնները, ժամանակին այդ հանձնել գյուղխորհուրդին, կազմել այն պետութիւնները, վորոնք հանձնարարված են նրան սեկցիայի կողմից: Բոլոր արձանագրութիւնները, պրագրութիւնները սեկցիայի քարտուղարը պարտավոր է խնամքով պահել գյուղխորհուրդի գրասենյակում հատուկ դործի մեջ:

Այն դեպքում, յերբ սեկցիայում քարտուղարութեան համար համապատասխան անձ չի լինի, քարտուղարի պաշտոնը կատարում է գյուղական խորհուրդի քարտուղարը:

Ինչ դեպքում և ինչպես է կազմակերպվում գյուղխորհուրդի սեկցիայի բյուրոն

Բոլոր սեկցիաները բյուրոններ չեն ունենում: Այդպիսիները կազմակերպվում են միայն այն սեկցիաները, վորոնց անդամների թիվը 10-ից ավելի յե:

Բյուրոն գյուղխորհրդի սեկցիայի ընթացիկ աշխատանքների վարողն է, նրա գործադիր և ոժանդակ մարմինը, պատասխանատու լինելով սեկցիայի առաջ: Սեկցիայի բյուրոն բաղկացած է 3 հոգուց, վորի կազմին է նախագահ, քարտուղար և մի անդամ՝ ոժանդակ աշխատանքների համար: Սեկցիայի բյուրոյի անելիքները կայանում են նրանում, վոր նա մշակում է սեկցիայի նիստերում քննվելիք հարցերը, մշակում է սեկ-

ցիայի որակարգը, կատարում և սեկցիայի բոլոր վորտ-
չումներն ու հանձնարարությունները, կազմում և սեկ-
ցիայի աշխատանքների ծրագրի նախագիծը և ներկա-
յացնում և սեկցիայի նիստի քննությանը, հրավիրում և
սեկցիայի նիստեր, հետևում և, վոր սեկցիայի անդամ-
ները կանոնավոր հաճախեն նիստերին և այլն:

Բյուրոյի կանոնավոր աշխատանքից շատ բան և
կախված: Յերբ բյուրոն թույլ և աշխատում ու մատ-
նված և անդործության, անբավարար են ընթանում
նաև սեկցիայի աշխատանքները: Դա շատ բնական և.
հարցերը, յերբ նրանք առանց մշակելու յեն մտցվում
սեկցիայի քննության և կանխորոք նախապատրաստ-
ված անհրաժեշտ տեղեկություններով և նյութերով,
չեն կարող հաջող լուծում ստանալ, վորի հետևանքով
սեկցիան մշտապես դժվարությունների առաջ պիտի
կանգնած մնա: Սեկցիաների աշխատանքների աշխու-
ժացման նպատակով գյուղական խորհուրդները խոշոր
ուշադրություն պիտի դարձնեն սեկցիաների բյուրոնե-
րի կազմակերպման ու նրանց աշխատանքի կանոնա-
վորման վրա:

ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐՄԻՆ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՈՐ- ՀՈՒՐԴԻ ՍԵԿՑԻԱՆ

Սեկցիան հանդիսանում և գյուղական խորհուրդի
համար նախ՝ խորհրդակցական և ապա գործադիր-կա-
տարողական մարմին: Նա կոչված և իրեն վերապահ-
ված իրավունքների սահմաններում ու աշխատանքի յե-
ղանակներով ամեն կերպ ոժանդակել գյուղական խոր-
հուրդին՝ նրա աշխատանքների բոլոր բնագավառնե-
րում: Յեկ իրոք, յեթե կուլտուր-կրթական սեկցիան,
քննության առնելով իր նիստում դպրոցի վերանորոգ-
ման հարցը, մշակում և վերանորոգման ծախքերի նա-
խահաշիվը, ցույց տալով, թե յե՞րբ, յե՞նչպես և ո՞ւմ
միջոցով տարվեն այդ աշխատանքները, և ապա ներկա-
յացնում և այդ ի քննություն գյուղխորհուրդին, միթե՞
դա յավաղույն ոժանդակությունը չի, վոր սեկցիան
ցույց և տալիս գյուղի իշխանությանը: Սեկցիան չի
սահմանափակվում միայն հարցերի մշակման ու նախա-
պատրաստման աշխատանքով: Նա միտմամանակ կա-

լող և հանդես գալ վորպես գործադրող իր այն վորոշումների, վորոնք հաստատվում են գյուղխորհուրդի կողմից և հանձնվում իրեն՝ ի կատարումն: Ասենք, գյուղական խորհուրդը, քննության առիւթով սեկցիայի կողմից մշակված դպրոցի վերանորոգման հարցը, հաստատում և սեկցիայի առաջադրությունները, միաժամանակ հանձնարարելով սեկցիային իրագործել այդ վորոշումները, այն ե՛ վարձել վարպետներ, հող տանել այս կամ այն նյութեղենի գնման, պատրաստման մասին և այլն: Նման հանձնարարություններ մշտապես գյուղական խորհուրդը իրավասու չե անել սեկցիային և վերջինս պարտավոր և այդպիսին կատարել:

Սեկցիան, հանդիսանալով գյուղխորհուրդի գործադիր մարմինը, վոչ մի վարչական իրավունք չի վայելում: Սա նշանակում է, չեթե սեկցիան, ստանալով գյուղխորհուրդից կարգադրություն՝ ուսումնասիրելու այս կամ այն հիմնարկի աշխատանքները և կատարելով այդ, նկատում է հիշյալ հիմնարկությունների աշխատանքների մեջ անկանոնություն, նա իրավասու չե ինքնուրույն կերպով կարգադրություններ անելու, կասեցնելու այդ մարմինների վորոշումների կատարումը, փոփոխություններ մտցնել նրանց ձեռնարկումների մեջ և այլն: Յեթե այդպես լիներ, այն ժամանակ գյուղում վո՛չ թե իշխանության մի մարմին կունենայինք, այլ ութ, գյուղխորհուրդներին առընթեր գոյություն ունեցող սեկցիաների թիւով: Այս հանգամանքը վոչ մի սեկցիա չպետք է աչքաթող անի և վոչ մի դեպքում՝ չյուրացնի վարչական իրավունքները, վորոնք վերապահված են միայն գյուղական խորհուրդին:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

Նիստերի հրավիրման և նրանց աշխատանք վարելու
կարգը

Այս կամ այն հարցերը քննելու ու վճռելու համար սեկցիան հրավիրում է նիստեր, առնվազն ամսական 1 անգամ: Սեկցիաների նիստերի հրավիրման որակաբային ծրագիրը պետք է համաձայնեցնել գյուղխորհուրդի նիս-

տերի որակարգային ծրագրի հետ: Դա անհրաժեշտ է նրա համար, վոր հնարավոր լինի սեկցիայում քննված հարցերը տեղափոխել գյուղխորհուրդի քննությանը: Յեթե գյուղխորհուրդը վորոշել է որացուցային ծրագրով իր նիստերը հրավիրել յուրաքանչյուր ամսվա 30-ին, գյուղխորհուրդի սեկցիաները իրենց նիստերը պետք է հրավիրեն այդ ժամկետից զանե մեկ շաբաթ առաջ: Սեկցիաների վորոշումները կարող են քննության առնվել և գյուղխորհուրդի նախագահության նիստերում, յեթե այս վորոշումների մեջ չեն մտնում այնպիսի բրնույթ կրող խնդիրներ, վորոնք բացառապես գյուղխորհուրդի պլենումի իրավասությանն են վերապահված: Ասենք, յեթե սեկցիան իր նիստում մշակում է աշխատանքի ծրագիր, այդպիսին, ի հարկե, պետք է քննվի ու հաստատվի պլենումի կողմից. սակայն յեթե սեկցիայի վորոշումները վերաբերվում են խրճիթ-ընթերցարանի, դպրոցի թերություններին և այլ նման հարցերին, գյուղխորհուրդի նախագահությունը կարող է ինքը քննել, հաստատել և անմիջապես կիրառելության դնել:

Գյուղխորհուրդի սեկցիայի նիստերը տեղի յեն ունենում դռնբաց, վորին կարող են ներկա լինել և վոչ սեկցիայի անդամները, բացի ընտրական իրավունքներից զրկվածներից: Սեկցիայի նիստերին կարող են հրավիրվել զանազան մասնագետներ, գյուղի կուլտուրական ուժերը խորհրդակցական ձայնի իրավունքով: Սեկցիայի նիստերը որինական են համարվում, յեթե ներկա յե տնդանների առնվազն կես մասը: Յեթե սեկցիան բաղկացած է 10 հոգուց, ապա, վորպեսզի հնարավոր լինի անցնել աշխատանքներին, անհրաժեշտ է, վոր տունվաղն 5 հոգի ներկա լինեն: Գյուղխորհուրդները, սեկցիաների բյուրոները պետք է հսկեն, վոր սեկցիաների նիստերին մասնակցեն նրա բոլոր անդամները: Յեթե սեկցիայի անդամը, առանց հարգելի պատճառների 3 անգամ միմիանց հետևից բացակա լինի նիստերից, նաև յեթե չկատարի սեկցիայի հանձնարարությունները, այդպիսիները խնդիրը քննվում է սեկցիայի նիստերում, և, յեթե արված մի շարք նախադրուշացումները մնում են անհետեանք, այդպիսիները հեռացվում են սեկցիայի կապ-

մից: Յեթե հեռացված սեկցիայի անդամը միտմամբ նաև գյուղխորհուրդի անդամ է, նա տվյալ դեպքում չի կորցնում գյուղխորհուրդի անդամ լինելու յուր իրավունքը. այդ իրավունքն ուժի մեջ մնում է մինչև ընտրողների կողմից նրան յետ կանչելը: Սեկցիայի նիստերում բոլոր վորոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ: Յեթե մեկ ստաջարկ ստանում է 4 ձայն, մյուսը՝ 3, յերրորդը՝ 2, անցնում է այն ստաջարկը, վոր ստացել է չորս ձայն: Սեկցիայի նիստերում սեկցիայի գյուղխորհուրդի վոր անդամները ոչտվում են վճռական ձայնով: Նույն այդ անդամները գյուղխորհուրդի նիստում ունեն միայն խորհրդակցական ձայն:

Սեկցիայի յուրաքանչյուր նիստի համար կազմվում է հատուկ արձանագրություն, հերթական համարակալությամբ, վորի մեջ մտնում են սեկցիայի բոլոր վորոշումները: Արձանագրությունները ստորագրվում են սեկցիայի նախագահի և քարտուղարի կողմից ու հանձնվում գյուղխորհուրդի քարտուղարին, վորպեսզի նա այդ մտցնի գյուղխորհուրդի քննությանը: Գյուղխորհուրդի նախագահը պարտավոր է հետևելու, վոր սեկցիայի կողմից ներկայացված արձանագրություններն իր ժամանակին քննության առնվեն գյուղխորհուրդի նախագահության ու պլենար նիստերում և ստանան իրենց լուծումը: Սեկցիաներին վերաբերող հարցերը քննելիս, անհրաժեշտ է սեկցիայի նախագահի, քարտուղարի կամ բյուրոյի անդամի ներկայությունը, վորը և հանդես է գալիս զեկուցողի դերում:

Գյուղական խորհուրդը սեկցիայի վորոշումները և ձեռնարկումները հաստատելուց հետո ձեռնամուխ է լինում նրանց իրագործմանը: Սակայն անհրաժեշտության դեպքում գյուղխորհուրդը այդ վորոշումները կարող է իրագործել հենց նույն սեկցիայի միջոցով: Այն դեպքում, յերբ սեկցիայի մշակվելիք հարցերը կապված են լինում գյուղխորհուրդի վորևե այլ սեկցիայի հետ, տրամաբան է միացյալ նիստեր՝ ընդհանուր ուժերով քննության առնելու ու լուծելու այս կամ այն խնդիրները:

ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Սեկցիան կարող է գյուղի աշխատանքների տարրեր ճյուղերի վերաբերյալ ձեռնարկել ուսումնասիրություն նախ՝ իր սեփական նախաձեռնությամբ և ապա՝ գյուղխորհուրդի և վերադաս մարմինների հանձնարարությամբ: Ի՞նչ ձևով և կատարում սեկցիան այդ ուսումնասիրությունը: Այդ նա կարող է անել հետևյալ յեղանակներով՝ սեկցիայի անդամների կենդանի հետազոտության, սեկցիայի անդամներին տարրեր հիմնարկություններին կցելու միջոցներով, գրավոր զեկուցումներ պահանջելով այս կամ այն կազմակերպություններից կամ թե համապատասխան հիմնարկությունների ղեկուցումները քննելով իր նիստերում: Այստեղից պարզ է, վոր գյուղխորհուրդի կոլտուր-կրթական սեկցիան, յեթե ուզում է պարզել դպրոցի վիճակը, այդ նպատակով կարող է իր նիստում լսել դպրոցի վարիչի զեկուցումը, միաժամանակ այդ զեկուցման հետ լսելով դպրոցին ամբողջված սեկցիայի անդամի հարակից զեկուցումը, կամ յեթե այդ ամբողջումը ինչ-ինչ պատճառներով ժամանակին չի կատարված, հանձնարարել իր անդամներից մեկին, յերկուսին ծանոթանալու դպրոցների աշխատանքներին և արդյունքները ներկայացնելու սեկցիային. վերջապես, սեկցիան կարող է դպրոցի վարիչից կամ դպրոցական խորհրդից խնդրել այս կամ այն հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Հետազոտման այս յեղանակների մեջ լավագույնը պետք է համարել՝ ամբողջման սխառմը, կենդանի հետազոտությունը և համապատասխան հիմնարկությունների ղեկուցումները սեկցիայի նիստերում լսելու միջոցը:

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԾՐԱԳՐՈՎ

Գյուղական խորհուրդի սեկցիաները պետք է ունենան իրենց աշխատանքի ծրագրերը: Այդ ծրագրերը ներառանք կազմում են գյուղական խորհուրդի ծրագրի հիման վրա և ներկայացնում գյուղխորհուրդի հաստատո-

մանր: Ծրագրերը պիտի կազմվեն խնամքով, ընդգրկելով աշխատանքի այն բոլոր ասպարեզները, վորոնք մտնում են գյուղխորհուրդի սեկցիայի իրավասության մեջ: Ծրագրերը կազմվում են վեց ամիս ժամանակով, այն է հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը և հուլիսի 1-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 1-ը:

Սեկցիան, կարիք յեղած դեպքում, կարող է քնննության առնել ծրագրից դուրս իր աշխատանքի ասպարիկին վերաբերյալ դանադան ընթացիկ և հրատույ հարցեր ու ներկայացնել գյուղական խորհրդին:

Գյուղական խորհուրդների սեկցիաների աշխատանքները ծրագրային ընթացքի մեջ դնելու հարցը հերթական ու ամենակարևոր անելիքներից մեկն է, վորի վրա գյուղական խորհուրդները և վերադաս դարձկոմները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն:

ՄԻՋՍԵԿՑԻՈՆ ՆԻՍՏԵՐ, ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաճախ պատահում է, յերբ կուլտ-կրթական սեկցիայի մշակելի դպրոցական հարցը կապված է լինում շինարարական-տանիտարական կամ այլ սեկցիայի աշխատանքների հետ: Նման դեպքերում անհրաժեշտ է, վոր այդ հարցերը քննվեն միջսեկցիոն ընդհանուր նիստերում, միացյալ խորհրդակցություններում: Միացյալ նիստերը դումարվում են այդ սեկցիաներից մեկըն ու մեկի կամ գյուղխորհուրդի նախագահի առաջարկությամբ: Պետք է արձանագրել, վոր մինչ այժմ աշխատանքի այս ձևը մեր գյուղական խորհուրդի սեկցիաների կողմից կիրարկվել է շատ թույլ, աննշան չափերով, մինչդեռ դա ունի այն առավելությունը, վոր նախ՝ հնարավոր է դառնում խուսափել աշխատանքի գուգահեռությունից և յերկրորդ՝ քննվելիք հարցերը լուսարանվում են բազմակողմանի կերպով:

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԿԱՊԸ

Սեկցիան գյուղական խորհուրդին ոգնող ձեռքն է բոլոր աշխատանքների ասպարիկում: Մեր քաղաքականությունը հասկացող և յուրացրած գյուղխորհուրդը չպիտի անտես անի սեկցիաների դերը գյուղական խորհուրդի սիստեմի մեջ, այլ ընդհակառակը բոլոր մի-

Ջոցները ձեռք պիտի առնի կանոնավորելու իր կապի սեկցիաների հետ, ուժեղացնելու իր ղեկավարութիւնը սեկցիաների աշխատանքների բնագավառում և այդ ճանապարհով աշխուժացնի սեկցիաների գործունեութիւնը:

Վոչ մի հիմնական հարց, վոչ մի կարևոր նախադիմ, վոչ մի նախահաշիվ գյուղական խորհուրդը չպետք է քննութեան առնի իր նիստում, յետև այդպիսին նախորդ մշակման չի յենթարկւած այս կամ այն սեկցիայի կողմից: Այս նպատակին հասնելու համար գյուղական խորհուրդը հեռուգական կերպով զանազան հանձնարարութիւններ պետք է անի սեկցիային, հետևի վոր այդ հանձնարարութիւնները կատարվեն: Այդ չկատարելու դեպքում գյուղական խորհուրդը պետք է պատասխանատւութեան հարց բարձրացնի և այդպիսով կենդանի հսկողութեան, կենդանի կապի գոյութիւնը զգացնել տալու քառանկյուն սեկցիային, նրա բյուրոյին, նախագահին, քարտուղարին: Վերջին տարիների վործք ցույց է տալիս, վոր յետև սեկցիան մատնւած է անգործութեան, յետև սեկցիայի անդամները անտարբեր են ղեկավարենց պարտականութիւնները, մտաւ-մտաին չեն խորհում այս կամ այն աշխատանքների ասպարիզում, դրա գլխավոր ու հիմնական պատճառը այն է, վոր գյուղ-խորհուրդը չի ցուցաբերել անհրաժեշտ ղեկավարութեան, և կապը սեկցիաների հետ յետև է ձեւական:

Սեկցիաների աշխատանքները աշխուժացնելու նպատակով գյուղական խորհուրդը նաև յերեք ամիսը մեկ անգամ իր նիստերում պետք է դնի սեկցիաների ղեկուցումները, և այդ ղեկուցումների մեջ շոշափւած հարցերի վերաբերյալ բնութենի կոնկրետ վորոշումներ: Ընդունւած վորոշումները գյուղական խորհուրդը չպետք է թողնի թղթի վրա, այլ պետք է գործադրի կյանքում, այլապես սեկցիայի անդամների մեջ կթուլանա աշխատելու յետանդը և ցանկութիւնը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ՅԵՎ
ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԴՈՐԾԿՈՄՆԵՐՆ ՈՒ ԳԱՎԴՈՐԾԿՈՄԻ
ԲԱԺԻՆՆԵՐԸ

Գյուղխորհուրդների սեկցիաների թույլ աշխատանքը հետևանք է նաև այն հանգամանքի, վոր գավառակային գործադիր կոմիտեները և գավգործկոմների համապատասխան բաժինները անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում սեկցիաների աշխատանքների վրա: Այն գավառակներում, վորտեղ գավառակային գործկոմները հրավիրել են սեկցիաների, բյուրոների, ակտիվ անդամների, նախագահների, քարտուղարների խորհրդակցություններ, ու պարզաբանել են նրանց հերթական անելիքները, բացատրել իրենց իրավունքներն ու պարտականությունները, — այդ գավառակներում սեկցիաները յժպած են աշխատանքի և գործնականապես ոգնում են գյուղական խորհուրդներին: Ընդհակառակը պատկերը անմխիթարական է այն վայրերում, վորտեղ գործկոմները չեն կիրարկել կյանքում այն բազմաթիվ կազմակերպչական միջոցները, վորոնք պիտի նպաստեյին սեկցիաների աշխատանքների աշխուժացման:

Գյուղական խորհուրդների սեկցիաների աշխատանքների կանոնավորման վրա գավառակային գործադիր կոմիտեները և գավգործկոմների համապատասխան բաժինները պետք է աչալուրջ հսկողություն ունենան: Այդ նպատակով սեկցիաների զեկուցումները պետք է դնել գավառակային գործադիր կոմիտեների նիստերում, հրավիրել սեկցիաների նախագահների և քարտուղարների գավառակային խորհրդակցություններ, բաժինների գծով գավառակները մեկնող պատասխանատու ընկերների վրա (գյուղատնտես, անասնաբուժ, բլծիչի, հրահանգիչ, տեսուչ և այլն) պարտականություն դնել գյուղերում գտնված ժամանակ ծանոթանալ սեկցիայի աշխատանքի հետ, ոժանդակել, ցուցմունքներ տալ նրանց, կազմակերպել դասախոսություններ դրույցներ և այլն: Այս ուղղությամբ կատարված աշխատանքների մասին պատասխանատու ընկերներից պետք է պահանջել զեկուցումներ, և նրանց հիման վրա կոնկրետ միջոցներ ձեռք առնել:



**ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԲՅՈՒՎՈՆԵՐԻ
ԱՆԳԱՄՆԵՐԸ, ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ, ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԸ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՍՏԱՆՈՒՄ**

Գյուղխորհուրդի սեկցիայում աշխատանք տանելը — դա յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է, յեթե նա չահապարզված է խորհրդային պետականության և հասարակայնության ամրացման գործով: Գյուղխորհուրդի սեկցիան հանդիսանում է այն դպրոցը, վորտեղ յուրաքանչյուրին տրվում է լայն հնարավորություն սովորելու, ծանոթանալու պետական և հասարակական աշխատանքները վարելու գործին, հայտնաբերելու իր ակտիվությունը և պատրաստականությունը հետապնդում ավելի պատասխանատու աշխատանքներ ստանձնելու համար: Ներկայումս մենք ունենք բավական խոշոր թվով գյուղխորհուրդի նախագահներ, գործկոմի անդամներ, խրճիթ-վարներ, այս կամ այն կազմակերպությունների ղեկավարներ, վորոնք իրենց սկզբնական աշխատանքը սկսել են սեկցիաներում և այնտեղ ձեռք բերել հսկայական փորձ:

Սա լավագույն վարձատրությունն է այն բոլորի համար, վորոնք լծված են սեկցիաների առոքյա աշխատանքներին: Դրամական վարձատրություն, համաձայն գյուղխորհուրդների կանոնադրության, սեկցիաների անդամները իրավասու չեն պահանջելու:

**ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՐԵՆ
ՊԱՐՁԱԲԱՆՎԱԾ Ե ՀԱՏՈՒԿ ՀՐԱՀԱՆԳՈՎ**

Վորոնք են գյուղատնտեսական, կուլտ-կրթական, շինարարական-սանիտարական, հասարակական կազմակերպություններին ունող, կենցաղային սեկցիաների նաև այլ անելիքները, ի՞նչ հարցերով պիտի դրադվեն նրանք. այս բոլորը մանրամասնորեն ձևակերպված է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության 1926 թ. հունիսի 15-ին «Գյուղական խորհուրդների սեկցիաների մասին» հրահանգի մեջ (տես գրքույկի հավելվածը): Անհրաժեշտ է, վոր գյուղական խորհուրդները, գյուղխորհուրդի սեկցիաների անդամները կուլենկախվորեն և անհատորեն ուսումնասիրեն այդ հրահանգը, վորտեղ պարզ ասված է, թե ի՞նչ անելիք

ունի գյուղատնտեսական սեկցիան գյուղական տնտեսութեան բարձրացման, հողաշինարարութեան, Ֆին-հարկային, ցանքերի պահպանութեան և սերմանման կամպանիաների, հողի վարձակալութեան, աշխատավորական հողագտագործական ասպարեզներում. ի՞նչ անելիքներ ունի կուլտուր-կըթական սեկցիան գյուղացիութեան կուլտուրական և քաղաքական պատրաստութեան մակարդակը բարձրացնելու գործում. ի՞նչ միջոցներ պիտի ձեռնարկի շինարարական-սանիտարական սեկցիան գործող տալու մի կողմից՝ գյուղի շինարարական աշխատանքներին, իսկ մյուս կողմից՝ բարձրացնելու նրա առողջապահական դրությունը, կովելով հիվանդությունները դեմ ու տարածելով գյուղացիութեան մեջ առողջապահական դիտելիքները. ինչպե՞ս պիտի անի հասարակական կազմակերպություններին աջակցող սեկցիան գյուղի կոլլեկտիվ տնտեսավարութեան ձևերին և գյուղական հասարակականութեան ամբացման զարկ տալու համար, ի՞նչ անելիքներ ունի կենցաղային սեկցիան հին կենցաղի ալյանդակ մնացորդների դեմ պայքարելու առպարիդում, ի՞նչ դեր և վերապահված բանվորագյուղացիական տեսչութեան սեկցիային բյուրոկրատիզմի, գործերի ձգձգումների, անտնտեսավարութեան դեմ պայքարելու ընդառնումում և այլն: Այս բոլոր հարցերը մանրամասնորեն բացատրված են հիշյալ հրահանգի մեջ, փորպիսին յուրաքանչյուր սեկցիա իր առօրյա աշխատանքների ընթացքում պետք է ունենա իր ձեռքի տակ:

Դատական սեկցիաների կազմակերպչական խնդիրները և անելիքները կարգավորվում են V-րդ գումարման Կենտգործկոմի II-դ նստաչքջանի 1927 թ. սեպտեմբերի 18-ի փորձամար և ՀՍԽՀ Արդժողկոմատի 1927 թ. հոկտեմբերի 1-ի հրահանգով. սրանց պարզաբանութեան մասին Արդժողկոմատը հրատարակել է № 7 գիրքը:

ԻՆՁ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՆՐԱՆՑ

Խորհրդայնացումից հետո յե միայն, վոր մեր գյուղը սկսել է ապրել հասարակական կյանքով, խորհրդային

կարգերն եյին, վոր աշխատավորության հնարավորություն տվին լայն չափերով մասնակից լինելու պետական աշխատանքներին, իսկ մինչ այդ, գյուղը դուրի ե յեղել այդ բարիքներէց: Հնի տխուր ժառանգությունը իր կնիքն ե դրել հասարակությունների վրա, վորի դեմ պայքարելու գործը կապված ե տարիների, տասնյակ տարիների հետևողական աշխատանքի հետ: Ազգաբնակչության կուլտուրական հետամնացությունը դժվարացնում ե այդ պայքարը, սակայն ընդհանուր ուժերով կազմակերպչական նորապույն ձևերով հնարավոր ե հաղթահարել այն բոլոր թերությունները, վորոնք գոյություն ունեն սեկցիաների աշխատանքների աստարիզում: Վորոնք են գյուղխորհուրդների սեկցիաների աշխատանքների հիմնական թերությունները.—սեկցիաների աշխատանքներին լրիվ չափով մասնակից չեն արված գյուղի ակտիվ տարրերը, սեկցիաների անդամները սեկցիաների նիստերը թույլ են հաճախում, սեկցիաներին դուգրնթաց կազմակերպվում են ժամանակավոր հանձնաժողովներ, վորոնք թուլացնում են սեկցիաների գործունեությունը, գյուղխորհուրդների, գավառակային գործկոմների նիստերում պարբերաբար չեն լսվում սեկցիաների ղեկուցումները, սեկցիաների կողմից հարույված հարցերը ժամանակին չեն քննվում ու հաստատվում, սեկցիաների աշխատանքները ամենուրեք չեն դրված ծրագրային հունի մեջ, սեկցիաների աշխատանքները թույլ կերպով են ղեկավարվում գյուղխորհուրդների կողմից, գյուղխորհուրդները սեկցիաներին չեն տալիս գործնական հանձնարարություններ, թույլ ե գավառակային գործկոմների հսկողությունը սեկցիաների աշխատանքների, գյուղխորհուրդների ե սեկցիաների կանոնավոր փոխհարաբերության վրա, գյուղխորհուրդի կողմից քննվող հիմնական հարցերը նախապես քննության չեն առնվում սեկցիաների կողմից ե այլն:

Այս թերությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ ե ձեռք առնել հետևյալ գործնական միջոցները. սեկցիաների աշխատանքներին մասնակից անել վոչ միայն գյուղխորհուրդների անդամներին, այլ նաև գյուղական ակտիվը՝ գավառակային գործկոմների ե խորհուրդների սեկցիաների մեջ այս կամ այն անդամ-

